

ՅԱԿՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ

ՅԱԿՈՒ Դ. ԶՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ մասին մեր ներկայ ուսումնասիրութիւնը ուղղակի մէկ հետեւութիւնն եղաւ մեր հրատարակած ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻ աշխատութեան (տպ. Վեներտիկ, Ս. Ղազար, 1960): Դաւանական նկատումներով պատրաստուած գործ մը չէ այս, այլ պարզապէս սխալ ներկայացուած կենսագրութիւն մը սրբագրուած տեսնելու ցանկութեամբ գրուած: Պարզ է որ եթէ Յակոբ Զուղայեցիի վերագրուի Հրոնոմ երթալ եւ այդ միջոցաւ հայ ազատագրական շարժումը հետապնդել, մենք անուղղակի կերպով սաղմնաւորած կ'ըլլանք վկայութեանց եւ կեղծուած վաւերագրութեանց նոր շարք մը, որոնց անվարան ընդունումը ոչ միայն Հայոց, այլ որեւէ ժողովուրդի պատմութեան համար պատուաբեր չէ:

Մեր յարգանքը Հոովմի Սրբազան Քահանայապետական արքային համար կարիք չունի որեւէ արդարացման: Իրապէս կը կասկածիմ որ Հոովմ խաբուած ըլլալ կարգ մը հոովմէադաւանութեան անարժան անձերու այս աններելի սուտերէն ու պատմական կեղծիքներէն: Սակայն հարցը այս չէ. այլ այն՝ որ Հայոց ազգային պատմութեան մէկ էջը ոչ միայն սխալ ներկայացուած է, այլ եւ կամաւոր կերպով եղծուած:

Վաւերաթուղթերը, որոնք իբր պացոյց առատորէն կը ներկայացնեն հոս, նոյնիսկ կարիք չունին բացատրութեան հաստատելու համար մեր ըսածը: Կամ աւելի ճիշտ, մեր բացատրութիւնները լոկ կապ են շարագրելու համար սա քանի մը էջերը Յակոբ Զուղայեցիի կենսագրութեան մասին, քննա-

կան մօտեցումով: Սոյն ուսումնասիրութիւնը անգամ մը եւս կուգայ հաստատել այն ինչ որ ըսած էի Իսրայէլ Օրիի մասին: Կ'ուզեմ այստեղ աւելցնել միայն, որ առանց փաստերու եւ վկայութեանց լոյսին, օգուտ չունի յամառութեամբ պաշտպանել տեսակէտ մը եւ զայն պարտադրել իբրեւ պատմական ճշմարտութիւն: Ստորեւ կը ներկայացնեմ իմ տեսակէտը պաշտպանող վկայութիւնները յուսալով որ բոլորն ալ պիտի արժանանան լուրջ քննութեան, որովհետեւ մեր նպատակը ուրիշ մասաւ մը պատմել չէ: Այլապէս աւելորդ պիտի ըլլար ոեւէ մէկ աշխատանք:

*
**

ՅԱԿՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ

մեր պատմութեան ժէ. դարու շրջանի այն դէմքերէն է, որ այլեւս հէքեաթային դարձած է: Իր կարեւորութեան համար կ'արժէ որ մենք զինք քննականորէն եւ անաչափորէն նկատի առնենք միայն ժամանակակից վկայութիւններու լոյսին տակ եւ մանաւանդ ուշադրութիւն դարձնելով իր գրչէն ելած եւ կամ իրեն վերագրուած ու մեզի հասած մեծ մասամբ անտիպ վաւերաթուղթերուն: Ահագին ըսելու չափ գրականութիւն մը հասած է մեզի իր եւ իրեն վերագրուած ինչ ինչ գործունէութեանց մասին: Յանկութիւն չունիմ այդ եղած գրականութեան մէջ մխրճուելու եւ ըստ իմ կարողութեանս ճիշտը, սուտէն եւ սխալէն զտորոշելու: Նման աշխատանք մը աւելորդ վաստակ պիտի նկատէի: Իմ մտադրած գործս ինքնին պիտի հաստատէ